ԼՐԱՏՈՒ · ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1971 թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին։

Բացման խոսքով հանդես եկավ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Վ. Զարյանը, որը տվեց Սպենդիարյանի ստեղծագործության հակիրճ բնութագիրը և ընդգծեց այն խոշոր նշանակությունը, որ նա ունեցավ և շարունակում է ունենալ հայ երաժշտական ստեղծագործության զարգացման գործում։

«Ալեքսանդր Սպենդիարյանը և հայկական մշակույթը» թեմայով զեկուցեց արվեստագիտության թեկնածու Ք. Գ. Գրիգորյանը։ Նա ցույց տվեց, որ Սպենդիարյանն իր ամբողջ կյանքի ու գործունեության ընթացքում միշտ սերտորեն կապված է եղել հայ իրականությանը և Հայաստան փոխադրվելը հանդիսացավ այդ կապերի տրամաբանական արդյունքը։

Արվեստագիտության թեկնածու, գոցենտ Մ. Ա. Տերյանի զեկուցումը նվիրված էր կոմպոզիտորի «Երեք արմավենի» (ըստ Մ. Լերմոնտովի բանաստեղծության) սիմֆոնիկ պատկերին, որը ժամանակին արժանացավ Գլինկայի անվան մրցանակի։

Այնուհետև հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Ն. Կ. Թահմիզյանը։ Նրա զեկուցումը՝ «Ալ. Սպենդիարյանի երաժշտական լեզվամտածողության զարգացումը» թեմայով, ցույց տվեց այն էվոլյուցիան, որ ունեցավ կոմպոզիտորի երաժշտական ոճը՝ ընդհանուր եվրոպականից դեպի նոր արևելյանը՝ հիմնված հայ ժողովրդական երաժշտության օգտագործման վրա։

«Ալմաստ» օպերայի ժանրային հատկանիշների բնութագրության հարցերին նվիրեց իր զեկուցումը արվեստագիտության թեկնածու Դ. Շ. Գյոգակյանը։ Նա «Ալմաստը» բնութագրեց որպես դրամատիկական, խոր հոգեբանական օպերա, որի մեջ առկա է նաև հայրենասիրության թեման։

Արվեստագիտության թեկնածու Կ. Է. Սարդրսյան-Խուդաբաշյանն իր զեկուցումը նվիրեց «Ալմաստ» օպերայի լիբրետիստ, բանաստեղծուհի Ս. Պառնոկին և ցույց տվեց նրա կատարած նշանակալից աշխատանքը լիբրետոյի ստեղծման գործում։

Գիտական նստաշրջանում կարդացված վերջին զեկուցումը կրում էր «Մի էջ «Ալմաստ» օպերայի բեմական պատմությունից» վերնագիրը, որով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Ռ. Ա. Աթայանը։

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Իրանական պետության 2500-ամյակի կապակցությամբ Սովետական Միությունում իրականացվող գիտական միջոցառումները կոորդինացնող ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հատուկ հանձնաժողովի նախաձեռնությամբ ս. թ. սեպտեմբերի 27—30-ը Լենինգրադում անց կացվեց գիտական նստաշրջան։

Իրանի պատմության կարևոր այս տարեթվի առթիվ գումարված գիտաժողովը կոչված էր Իրանի պատմության ու մշակույթի տարբեր հարցերի մշակման ճանապարհով ցույց տալու նաև սովետական մասնագետների կարևոր ավանդը իրանագիտության զարգացման գործում։

Զեկուցումները նվիրված էին հին և վաղ միջնադարյան Իրանի հիմնական փուլերին (Ա-